

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
մարտի 27-ի N 342-Ն որոշման

**ԴԵՂԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԳՈՎԱԶԴԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ, ԱՅԴ ԳՈՎԱԶԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**1. ԴԵՂԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԳՈՎԱԶԴԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում դեղերի, բժշկական արտադրատեսակների և բուժական մեթոդների գովազդին ներկայացվող պահանջները և այդ գովազդի թույլտվության (այսուհետ՝ գովազդի թույլտվություն) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Գովազդի թույլտվությունը (ձև N 1) տրամադրում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Բուժական մեթոդի գովազդի թույլտվությունը տրամադրվում է բժշկական օգնության և սպասարկման համապատասխան պայմաններում և տեսակով գործունեության իրականացման համար տրված լիցենզիայի գործողության ժամկետով, դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձանց դեղի գովազդի թույլտվությունը տրամադրվում է դեղատնային գործունեության իրականացման համար տրված լիցենզիայի գործողության ժամկետով, որը չի կարող գերազանցել դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ժամկետը, իսկ սույն կարգով դեղի գովազդատու հանդիսացողներին, բացառությամբ դեղատնային գործունեության իրականացման համար լիցենզավորված անձանց, դեղի գովազդի թույլտվությունը տրամադրվում է դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ժամկետով:

4. Գովազդի թույլտվության հայտը բավարարվում կամ մերժվում է սույն կարգով նախատեսված հայտը և փաստաթղթերը ներկայացնելու օրվանից մինչև 7 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Գովազդի թույլտվություն ստանալու համար հայտ կարող է ներկայացնել միայն գովազդատուն կամ նրա կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված անձը, ընդ որում՝

1) դեղի գովազդի գովազդատու կարող են հանդես գալ՝

ա. դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը,

բ. դեղերի արտադրության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը՝ միայն դեղի արտադրության լիցենզիային համապատասխան արտադրվող դեղի գովազդի համար,

գ. դեղերի մեծածախ իրացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը,

դ. դեղերի մեծածախ իրացմամբ, դեղատնային գործունեությամբ և դեղերի արտադրությամբ զբաղվող՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված օտարերկրյա իրավաբանական անձինք կամ օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները.

2) բուժական մեթոդի գովազդատու կարող են հանդես գալ բժշկական օգնության և սպասարկման համապատասխան պայմաններում և տեսակով գործունեության իրականացման համար լիցենզավորված անձինք.

3) բժշկական արտադրատեսակների գովազդատու կարող են հանդես գալ տվյալ բժշկական արտադրատեսակների արտադրություն կամ ներմուծում կամ մեծածախ կամ մանրածախ իրացում իրականացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:

6. Գովազդի թույլտվություն ստանալու համար գովազդատուն կամ նրա կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված անձը լիազոր մարմին է ներկայացնում՝

1) հայտ (ձև N 2)՝ նշելով՝

ա. իրավաբանական անձի դեպքում՝ գովազդատու իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի համարը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, գովազդի տեսակը, որի թույլտվության հայտ է ներկայացվում՝ նշելով դեղի կամ բժշկական արտադրատեսակի կամ բուժական մեթոդի կոնկրետ անվանումը, տեղեկատվական միջոցը, որի օգնությամբ տարածվելու է գովազդը, էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի համարը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, գովազդի տեսակը, որի թույլտվություն ստանալու հայտ է ներկայացվում՝ նշելով դեղի կամ բժշկական արտադրատեսակի կամ բուժական մեթոդի կոնկրետ անվանումը, տեղեկատվական միջոցը, որի միջոցով տարածվելու է գովազդը, էլեկտրոնային փոստի հասցեն,

գ. բժշկական օգնության և սպասարկման կամ դեղատնային գործունեության կամ դեղերի արտադրության կամ բժշկական արտադրատեսակների արտադրության կամ դեղերի մեծածախ իրացման լիցենզիայի սերիան, համարը, տալու օրը, ամիսը, տարեթիվը: Սույն պահանջը չի տարածվում բժշկական արտադրատեսակների ներմուծմամբ կամ մանրածախ կամ մեծածախ իրացում իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև դեղերի մեծածախ իրացմամբ, դեղատնային գործունեությամբ և դեղերի արտադրությամբ զբաղվող՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա իրավաբանական անձանց կամ օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կողմից գովազդի թույլտվության համար հայտ ներկայացնելու դեպքերի վրա,

դ. օտարերկրյա իրավաբանական անձի դեպքում՝ օտարերկրյա իրավաբանական անձի կանոնադրության պատճենը.

2) լիազորված անձի կողմից գովազդի թույլտվության հայտ ներկայացնելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով նրան տրամադրված լիազորագիրը և նրա անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

3) գովազդի տեքստը՝ սցենարով (նկարագրությամբ), փաստաթղթային՝ հաստատված հայտատուի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում), գովազդի տեքստի Word տարբերակը, իսկ լրատվության էլեկտրոնային միջոցներով գովազդ իրականացնելու դեպքում՝ նաև գովազդային հոլովակը՝ էլեկտրոնային տարբերակով.

4) դեղի գովազդի թույլտվության հայտ ներկայացնելու դեպքում՝ գովազդային նյութի փորձաքննության եզրակացությունը.

5) պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը:

7. Հայտատուի կողմից հրավիրված օտարերկրյա քաղաքացի հանդիսացող բուժաշխատողի կողմից իրականացվելիք բուժական մեթոդի գովազդի հայտ կարող է ներկայացվել տվյալ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող բուժաշխատողի կողմից բժշկական կազմակերպությունում գործունեություն ծավալելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման N 5 հավելվածի 18-րդ կետին համապատասխան տեղեկացնելուց հետո:

8. Գովազդի հայտը, գովազդի նյութը, տեքստը և հոլովակները լիազոր մարմին կարող են ներկայացվել առձեռն, փոստային ծառայության միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով՝ լիազոր մարմնի info@moh.am հասցեով: Էլեկտրոնային փոստի միջոցով գովազդի հայտը ներկայացնելու դեպքում գովազդի նյութը, տեքստը և հոլովակները չեն կարող ներկայացվել էլեկտրոնային հղումների միջոցով, առձեռն և փոստային ծառայության միջոցով ներկայացնելու դեպքում գովազդի տեքստը, նյութը և հոլովակները ներկայացվում են էլեկտրոնային կրիչով:

9. Լիազոր մարմին ներկայացված հայտի և այլ փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ընդունվում է գովազդի թույլտվություն տրամադրելու կամ գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հրաման: Գովազդի թույլտվություն տրամադրելու մասին հրամանին

կցվում են գովազդի թույլտվությունը, գովազդի տեքստը և (կամ) հոլովակը՝ հաստատված լիազոր մարմնի կնիքով և համաձայնություն տալու մասին նշագրմամբ (ձև N 4):

10. Գովազդի թույլտվություն ստանալու համար ներկայացված փաստաթղթերում ձևական սխալների առկայության դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է հայտատուին այդ մասին և առաջարկում դրանք երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղղել կամ լրացնել: Սույն կետով սահմանված ժամկետը չի հաշվարկվում սույն կարգի 4-րդ կետով գովազդի թույլտվության տրամադրման կամ մերժման համար սահմանված ժամկետի մեջ:

11. Գովազդի թույլտվության մասին հայտը մերժվում է, եթե՝

1) գովազդի թույլտվություն ստանալու համար փաստաթղթերը թերի են կամ ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, կամ գովազդի թույլտվության տրամադրման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերից որևէ մեկը բացակայում է, և եթե սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել.

2) դեղերի գովազդի տեքստը հակասում է «Դեղերի մասին» կամ «Գովազդի մասին» կամ «Լիցենզավորման մասին» կամ «Հանրային առողջապահության մասին» կամ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» կամ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» կամ «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» կամ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքներին կամ դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին.

3) եթե բուժական մեթոդների գովազդի տեքստը հակասում է «Գովազդի մասին» կամ «Լիցենզավորման մասին» կամ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» կամ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» կամ «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» կամ «Հոգեբուժական

օգնության և սպասարկման մասին» կամ «Հանրային առողջապահության մասին» օրենքներին կամ դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին կամ սույն որոշման պահանջներին:

4) եթե բժշկական արտադրատեսակների գովազդի տեքստը հակասում է «Գովազդի մասին» կամ «Լիցենզավորման մասին» կամ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» կամ «Հանրային առողջապահության մասին» օրենքներին կամ դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին կամ սույն որոշման պահանջներին:

12. Գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու մերժման համար հիմք հանդիսացող իրավական հիմքերը:

13. Գովազդի թույլտվության հրամանը գովազդի համաձայնեցված տեքստի և (կամ) հոլովակի հետ կամ գովազդի թույլտվությունը մերժելու մասին հրամանը հանձնվում է գովազդատուին՝ եռօրյա ժամկետում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

14. Գովազդի թույլտվությունը չի կարող գովազդատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

15. Դեղի գովազդատուն իրավասու է գովազդը տարածել գովազդի թույլտվության մեջ նշված ժամկետում, որը չի կարող գերազանցել տվյալ տեսակով գործունեության իրականացման համար տրված լիցենզիայի գործողության ժամկետը:

16. Գովազդատուն գովազդը կարող է տեղադրել միայն սույն կարգով տրված գովազդի թույլտվությամբ նախատեսված տեղեկատվության միջոցով և թույլտվությամբ սահմանված պահանջների պահպանմամբ:

17. Գովազդատուի կողմից անբարեխիղճ գովազդ իրականացնելու (ներառյալ՝ գովազդի տեքստի փոփոխության) դեպքում լիազոր մարմնի ղեկավարը իրավասու է ուժը կորցրած ճանաչել գովազդի թույլտվությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և դիմելու գովազդակրին

կամ գովազդի տեղադրման թույլտվություն տված անձին՝ գովազդի տարածումը դադարեցնելու պահանջով:

18. Գովազդի թույլտվության տրամադրումը մերժելու կամ թույլտվությունը դադարեցնելու վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հրամանները կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կամ դատական կարգով:

19. Սույն որոշմամբ սահմանված կարգով գովազդի թույլտվություն ունեցող գովազդում փոփոխություն կատարելու դեպքում գովազդատուն կամ նրա կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված անձը ներկայացնում է հայտ՝ համաձայն N 3 ձևի՝ կից ներկայացնելով գովազդի փոփոխված տեքստը՝ սցենարով (նկարագրությամբ), փաստաթղթային՝ հաստատված հայտատուի ստորագրությամբ և կնիքով (առկայության դեպքում), փոփոխված տեքստի Word տարբերակն առձեռն, փոստային ծառայության միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով՝ լիազոր մարմնի info@moh.am հասցեով: Էլեկտրոնային փոստի միջոցով գովազդի հայտը ներկայացնելու դեպքում գովազդի նյութը, տեքստը և հղովակները չեն կարող ներկայացվել էլեկտրոնային հղումների միջոցով, առձեռն և փոստային ծառայության միջոցով ներկայացնելու դեպքում գովազդի տեքստը, նյութը և հղովակները ներկայացվում են էլեկտրոնային կրիչով: Դեղի գովազդի դեպքում ներկայացվում է նաև փոփոխված գովազդային նյութի փորձաքննության եզրակացությունը:

20. Գովազդի թույլտվություն ունեցող գովազդում փոփոխություն կատարելու վերաբերյալ հայտը բավարարվում կամ մերժվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանով՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

21. Գովազդի թույլտվությունը համարակալվում է ըստ սերիայի և հերթական համարի՝ հնգանիշ թվերով: Համարակալումը սկսվում է յուրաքանչյուր օրացուցային տարվա հունվարի 1-ից և ավարտվում դեկտեմբերի 31-ին: Գովազդի թույլտվության սերիան համարակալվում է հետևյալ սկզբունքով՝

- 1) դեղերի գովազդի համար՝ ԴԳ.
- 2) բուժական մեթոդների գովազդի համար՝ ԲՄԳ.

3) բժշկական արտադրատեսակների գովազդի համար՝ ԲԱԳ:

22. Գովազդատուի՝ դեղերի արտադրության կամ բժշկական արտադրատեսակների արտադրության կամ դեղերի մեծածախ իրացման կամ դեղատնային գործունեության կամ բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի դադարեցման դեպքում գովազդի թույլտվության տրամադրման մասին լիազոր մարմնի ղեկավարի հրամանը ճանաչվում է ուժը կորցրած, իսկ կասեցման դեպքում գովազդի թույլտվությունը կասեցվում է լիցենզիայի գործողության կասեցման ժամանակահատվածով, որի մասին պատշաճ ծանուցվում է հայտատուին:

2. ԴԵՂԵՐԻ, ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻ ԳՈՎԱԶԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

23. Դեղի կամ բուժական մեթոդի կամ բժշկական արտադրատեսակների գովազդի դեպքում պետք է հեռարձակվեն կամ պատկերվեն լիազոր մարմնի կողմից տրված գովազդի թույլտվության համարը, օրը, ամիսը, տարեթիվը:

24. Դեղերի գովազդի գովազդային հոլովակի և փաստաթղթային տեքստի բովանդակությունը պետք է՝

1) ներառի հետևյալ բառակապակցությունները՝ «դեղն ունի հակացուցումներ և օգտագործելուց առաջ նպատակահարմար է խորհրդակցել բժշկի հետ».

2) համապատասխանի «Դեղերի մասին» օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պահանջներին:

25. Բուժական մեթոդի գովազդի դեպքում գովազդը պետք է տեղեկություններ ներառի տվյալ բուժական մեթոդն իրականացնող լիցենզավորված անձի բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի վավերապայմանների (լիցենզիայի տեսակը, տալու տարեթիվը, ամիսը, օրը, համարը) վերաբերյալ:

26. Բուժական մեթոդի թույլտվությունը տրվում է միայն բժշկական օգնության և սպասարկման համապատասխան պայմաններում և տեսակով գործունեության իրականացման համար լիցենզավորված անձանց:

27. Չեն կարող գովազդվել այն բուժական մեթոդները, որոնց միջոցով առաջարկվում է հասնել բժշկագիտությամբ չհիմնավորված արդյունքների կամ ամբողջությամբ բուժել այնպիսի հիվանդություններ, որոնք բժշկագիտության տվյալների հիման վրա հնարավոր չէ ամբողջությամբ բուժել:

28. Բուժական մեթոդի վերաբերյալ տեղեկատվության միջոցներով տպագրված նյութերը կամ հեռարձակված հաղորդումների, հաղորդաշարերի հեռարձակման դեպքում նյութերը պետք է տեղեկություններ ներառեն հաղորդման գովազդային բնույթի մասին՝ նշելով բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի վավերապայմաններն ու լիազոր մարմնի թույլտվության համարն ու ամսաթիվը: Հաղորդումների, հաղորդաշարերի հեռարձակման ընթացքում հնչող գովազդը պետք է ունենա սույն որոշմամբ սահմանված կարգով տրված թույլտվություն:

29. Բուժական մեթոդների գովազդի ժամանակ չեն կարող պատկերվել կամ հեռարձակվել տվյալ բուժական մեթոդի միջոցով բուժված անձանց պնդումները կամ կարծիքները բուժման ընթացքի կամ արդյունավետության կամ արդյունքների վերաբերյալ:

30. Բուժական մեթոդների գովազդման դեպքում բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

31. Եթե բժշկական արտադրատեսակների կիրառումը պահանջում է կիրառման հրահանգների հետ պարտադիր ծանոթացում, ապա գովազդի տեքստը պետք է տեղեկություններ ներառի դրա մասին:

Ձև N 1**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ****Գ Ո Վ Ա Զ Դ Ի Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N - - - X X - 0 0 0 0 0**

Տրված _____ 20 թ.

Գովազդի տեսակը

(դեղի կամ արտադրատեսակի կամ բուժական մեթոդի անվանումները)Գովազդատու անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և բնակության վայրը
կամ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը __________
Գործունեության իրականացման վայրը __________
Տեղեկատվության միջոցի տեսակն ու անվանումը_____
Թույլտվության գործողության ժամկետը _____ 20 թ.-ից մինչև _____ 20 թ.-ը:_____
(ստորագրությունը)

Կ.Տ.

Ձև N 2

ՀՀ առողջապահության նախարար

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ**ԳՈՎԱԶԴԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը

2. Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի համարը

3. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի համարը

4. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, կապի այլ միջոցներ

5. Գովազդի տեսակը, որի թույլտվության հայտ է ներկայացվում

(դեղի կամ արտադրատեսակի կամ բուժական մեթոդի՝ նշելով կոնկրետ անվանումները)

6. Լիցենզիայով նախատեսված գործունեության տեսակը, լիցենզիայի սերիան, համարը, տալու օրը, ամիսը, տարեթիվը (լրացվում է միայն դեղատնային գործունեություն կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող գովազդատուի կողմից գովազդի թույլտվության հայտ ներկայացնելիս)

7. Տեղեկատվության միջոցի տեսակն ու անվանումը

(հեռուստատեսություն, ռադիո, ինտերնետ, արտաքին գովազդ, զանգվածային տեղեկատվության տպագիր միջոց՝ նշելով անվանումը)

8. Գովազդի տարածման ժամկետը

(նշվում է միայն դեղի գովազդի դեպքում)

Կից ներկայացվող փաստաթղթերը և նյութերը՝

1. Գովազդի տեքստը (էլեկտրոնային), գովազդային հոլովակը (էլեկտրոնային) (ընդգծել)

2. Լիազորված անձի կողմից գովազդի թույլտվության հայտ ներկայացվելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով նրան տրամադրված լիազորագիրը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը

3. Պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ և երաշխավորում, որ գովազդի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

(գովազդատուի կամ լիազորված անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ 20 թ.

Կ.Տ. (առկայության դեպքում)

Ձև N 3

ՀՀ առողջապահության նախարար

(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ**ԳՈՎԱԶԴԻ ՏԵՔՍՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Իրավաբանական անձի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը,
ազգանունը

2. Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի համարը

3. Անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վկայականի համարը

4. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային
փոստի հասցեն, կապի այլ միջոցներ

5. Գովազդի թույլտվության սերիան, համարը, տալու ամսաթիվը, գործողության
ժամկետը

Կից ներկայացվող փաստաթղթերը և նյութերը՝

1. Գովազդի տեքստը (Էլեկտրոնային), գովազդային հոլովակը (Էլեկտրոնային)
(ընդգծել)
2. Լիազորված անձի կողմից գովազդի թույլտվության հայտ ներկայացվելու
դեպքում՝ օրենքով սահմանված կարգով նրան տրամադրված լիազորագիրը
3. Պետական տուրքի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ և երաշխավորում,
որ գովազդի բովանդակությունը համապատասխանում է ՀՀ օրենսդրության
պահանջներին:

(գովազդատուի կամ լիազորված անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ 20 թ.

Կ.Տ. (առկայության դեպքում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ****ՆՇԱԳՐՈՒՄ****ԳՈՎԱԶԴԻ ՏԵՔՍՏԻՆ ԵՎ (ԿԱՄ) ՀՈԼՈՎԱԿԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Դեղի կամ արտադրատեսակի կամ բուժական մեթոդի 20 թվականի թիվ - - -
X X - 0 0 0 0 0

գովազդը _____

(գովազդատուի անվանումը կամ անունը, ազգանունը)

Կարող է իրականացվել միայն սույն տեքստի և (կամ) կից հղովակի համաձայն:

ՀՀ առողջապահության նախարար

(ստորագրությունը)

_____ 20 թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ